

ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի ելույթը ԵՊՀ գիտական խորհրդի՝ Հայոց Մեծ Եղեռնի
100-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստում

<<Ցեղասպանությունից Վերածնունդ>>

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի հարգելի անդամներ,
Հարգելի դասախոսներ, հյուրեր,
Միբելի ուսանողներ.

Մեծ պատերազմները ջրբաժանել են մարդկության զարգացման պատմական ընթացքը՝ շատ ժողովուրդների տանելով դեպի տառապանք ու գոյազրկում, շատերին էլ բերելով բարեկեցություն և զարգացում: Առաջին համաշխարհային պատերազմը հայ ժողովրդի համար գոյապահպանության լրջագույն փորձություն էր: Թեև այդ փորձությունը հաղթահարվեց, բայց արժեցավ միլիոնավոր անմեղ մարդկանց կյանք, պատմական հայրենիքի մեծագույն մասի ժամանակավոր կորուստ, մշակութային մի հսկայածավալ արեալի ոչնչացում:

Այսօր Վան քաղաք այցելողների աչքերն ակամա հառնում են մի բարձրադիր բլրի վրա թուրքերենով հետևյալ գրվածքին. <<երջանիկ եմ, որ թուրք եմ ծնվել>>: Թուրք ծնվելու երջանկությունն այսպես ցուցադրաբար քարոզվում է Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի Հանրապետության մյուս բոլոր բնակավայրերում: Թուրքերն իրենց երջանիկ կարող են համարել. տերն են աշխարհաքաղաքականապես ու տնտեսապես կարևոր ու հսկայածավալ մի տարածքի՝ բնակլիմայական բարենպաստ գոտիներով, բարեբեր հողով, լի բազմապիսի ռեսուրսներով, տարածք, որտեղ քաղաքակրթություններ են ծնվել ու ապրել, որտեղ ինքնատիպ մշակույթներ են ձևավորվել ու սինթեզվել... Ամենևին էլ չարական չենք թուրքերի երջանկության հանդեպ, միայն թե երջանկության զգացումի ներքո նրանք ընկալեին քրտնաջան աշխատանքի բարի պտուղների ճաշակումը, այլոց համար բարեկեցության պայմանների ստեղծմամբ բարձր ինքնագնահատական ունենալը, այլոց վիշտը մեղմելն ու արտասուքը սրբելը: Ցավոք թուրքերի մի մասն

անտեղյակ է իր ազգային երջանկության ծանր ու դաժան գնի մասին, մի մասը տեղյակ է, բայց լռում է, մի մասն էլ շարունակում է հոխորտալ, ասամ ցույց տալ ու պատրաստակամություն հայտնել նոր արհավիրքներ գործելու: Թուրք ծնվելն իսկապես երջանկություն է բոլոր նրանց համար, ովքեր չեն խորշում այդ երջանկության հիմքում տեսնել միլիոնավոր ընդհատված կյանքեր, ավերված երկրներ, որբացած մանուկներ, մանկազրկված մայրեր, իսլամացված աղջիկներ, ինկվիզիցիայի ոճին դաժանությամբ բազմապատիկ գերազանցած խոշտանգումներ, հրդեհված արտեր, կտրված այգիներ, ջարդված խաչքարեր, քանդված եկեղեցիներ, մոխրացած տներ, այրված ձեռագրեր, նենգափոխված մշակույթ, արգելված խոսք, լռեցված ձայն ու գերեզմանված արդարադատություն:

Հարյուրամյակ առաջ պատուհասած ծանրագույն ողբերգության հետևանքով հայ ժողովրդի համար թախծոտ երազանք դարձավ Հայկական լեռնաշխարհը՝ տարածք, որտեղ նա ծնունդ է առել ու կենսագործել: Հայն այստեղ ապրել է բնությանը սերտ, բնության օրենքներով, մշակել է իր հողն ու ստեղծել իր ինքնատիպ մշակույթը: Նա ռազմատենչ չի եղել ու բավարարվել է իր պատկառելի կենսատարածքով, որը ինչպես ստեղծարար մշակույթների, այնպես էլ, ցավոք, հակամարտ քաղաքական շահերի խաչաձևման վայր է եղել: Չնայած արտաքին ռազմաքաղաքական անբարենպաստ ազդեցություններին՝ հասարակության պատմական զարգացումը Հայաստանում բնականոն ընթացք է ունեցել: Թուրքական տարրի հայտնվելն Առաջավոր Ասիայում հիմնովին վերափոխել է այդ բնականոն ընթացքը: Քոչվորական կացութաձևով ապրող, արդար ու ստեղծագործ աշխատանքի ավանդույթ չունեցող և ռազմատենչ հակումներ ցուցաբերող այս էթնոսի համար Առաջավոր Ասիան ու Հայաստանը հարմարավետ տարածաշրջան էր՝ հազարամյակներով ստեղծված սոցիալ-տնտեսական պատրաստի բարիքը յուրացնելու տեսանկյունից: Թուրք-օղուզական, թաթար-մոնղոլական տարրի հաստատումն ու ամրապնդումը Հայաստանում իսկական ողբերգություն էր հայ ժողովրդի համար. գլխատվեց հայության վերնախավը, ոչնչացվեցին հայ խոշոր իշխանական տները, որ որոշ չափով պետականության տարրերի կրողներն էին և օժտված էին այդ պետականությունը վերականգնելու ներուժով, ավերվեցին ու

ամայացան հայկական քաղաքները, որոնք մեր երկրի կապիտալիստական զարգացման ծիլերն էին տալիս, ծայր առավ ժողովրդի արտագաղթն իր բնօրրանից, իսկ ցածրամակարդակ մշակութակիր ու կենցաղավար վաչկատուն ցեղերը զանգվածաբար սկսեցին հաստատվել հայոց հողի վրա:

1299 թվականին հիմնադրված օսմանյան պետությունը տեղաբնիկ ժողովուրդներին հայրենագրկելու, ոչնչացնելու և ձուլելու հարցում գերազանցեց թուրքական բոլոր պետական-քաղաքական միավորներին:

Հիմք ընդունելով Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի դրույթները՝ ցեղասպանություն եզրույթով այսօր բնութագրվում է սոսկ երիտթուրքերի կողմից իրականացված Մեծ Եղեռնը 1914-ից 1916 թվականներին, երբեմն էլ՝ սուլթան Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված կոտորածները 1890-ական թվականների կեսերին և Քեմալ Աթաթուրքի վարչակազմի կողմից իրականացված կոտորածների նոր փուլը 1920-ից 1923 թվականներին: Իհարկե, նշված կոտորածներն իրենց ծավալով ու դաժանությամբ աննախադեպ էին օսմանյան տիրապետության ներքո ապրող հայ ժողովրդի հարյուրամյակների պատմության մեջ: Սակայն ի՞նչ անուն կարելի է տալ մինչև նշված շրջանը թուրքական սուլթանների ու նրանց փաշաների կողմից հայերի հանդեպ դարերով վարվող այն բիրտ քաղաքականությանը, որի արդյունքում հայ տարրի թիվն իր հայրենիքում գնալով նվազում էր, հայր ենթարկվում էր դաժան հարստահարման, ազգային ու կրոնական ծանր հալածանքների, կասեցվում էր հայկական մշակույթի զարգացումը, անվանափոխվում էին հայկական բնակավայրերը: Հայաստանի մի մեծ հատվածին տիրապետելու ժամանակներից սկսած՝ օսմանյան Թուրքիան դարեր շարունակ վարել է հայերին հայրենիքից ու ազգային ինքնության շատ հատկանիշներից զրկելու քաղաքականություն, ինչը եթե նույնիսկ երիտթուրքական ծրագրերի նման փաստաթղթավորված չի եղել, բայցև ունեցել է այդ քաղաքականության կանխամտածված ու մեկ կենտրոնից ղեկավարված լինելու հանգամանքն ի ցույց դնող ակներև դրսևորումներ: 1894-1923 թվականների Հայոց Ցեղասպանությունը հայության հայրենագրկման օսմանյան դարավոր ծրագրի վերջին ու վճռական արարն էր, ինչի համար ստեղծվել էին ավելի քան նպաստավոր պայմաններ:

19-րդ դարում, երբ միջազգային հարաբերությունների հիմնական գործող անձինք սկսեցին հանդես գալ ազգերն ու ազգային պետությունները, երբ ազգայնականությունը սկսեց հանդիսանալ քաղաքական այդ միավորների գործունեության ամենավճռական իմպուլսը, թուրք վերնախավը ևս, ազգերի հակամարտության թոհուրոհում մրցունակ լինելու համար, խնդիր դրեց ձևավորվել որպես ազգ ու սերմանել թուրք ազգային ինքնագիտակցություն: Օսմանյան իշխանությունների կողմից այս ուղղությամբ իրականացվող գործունեությունը, սակայն, ոչ թե ազգայնական, այլ ազգայնամուլական գաղափարական հիմքեր ուներ: Թուրքիայի ազգային ու միջազգային քաղաքականությունը խարսխվեց օսմանիզմի, պանթուրքիզմի, պանիսլամիզմի ծայրահեղ հետադիմական գաղափարախոսությունների վրա, որոնք ըստ էության թուրք ժողովրդին մղում էին այլատյացության և ուղղված էին ինչպես օսմանահպատակ ոչ թուրք կամ ոչ մահմեդական ժողովուրդների դեմ, այնպես էլ Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին որպես խոչընդոտ հանդես եկող, Թուրքիայի տարածքից դուրս գտնվող ազգերի ու այլ քաղաքական միավորների դեմ: Թուրքական այլատյացությունը ահագնալի չափեր ստացավ, երբ օրըստօրե սաստկացող սուլթանական դաժան քաղաքականության դեմ էլան բազմազգ կայսրության ճնշվող ժողովուրդները և երբ այդ ժողովուրդների օրինական իրավունքները քաղաքական շահարկման առարկա դարձան Ռուսաստանի ու Եվրոպական մեծ տերությունների ձեռքում: 19-րդ դարավերջին Եվրոպական տիրույթներից արդեն զրկված Օսմանյան կայսրությունը, նույնը իր ասիական տարածքներում թույլ չտալու համար, դիմեց ժողովուրդների բնաջնջման հրեշավոր ուղեգծին: Սուլթանական, երիտթուրքական և քեմալական վերնախավերի կողմից բնաջնջվեցին հայերը, հույները, ասորիները և թուրքահպատակ այլ ժողովուրդներ:

Արևմտյան Հայաստանում հայության ֆիզիկական գոյությունը երաշխավորելու պայմանը կա՛մ հայոց պետականության վերականգնումը, կա՛մ ազգային ինքնավարության հաստատումը կարող էր լինել: Այս ուղղությամբ հայ քաղաքական ուժերի ջանքերն ի դերն էլան՝ բախվելով արտաքին ու ներքին անբարենպաստ մի շարք իրողությունների: Մեծ տերություններից և ո՛չ մեկի շահերին համահունչ չէր

հայկական պետականության կամ ինքնավարության ստեղծումը: Ցարիզմը, որին Արևմտյան Հայաստանը հետաքրքրում էր զուտ որպես տարածք, երկյուղում էր արևմտահայերի անկախացման կամ ինքնավարացման սցենարի կովկասյան կրկնությունից, ուստի ոչ միայն տենդագին խոչընդոտում էր արևելահայ ուժերի կողմից արևմտահայերին ռազմական, քաղաքական ու տնտեսական աջակցության նախաձեռնությունները, այլև շատ անգամ ուղղակի համագործակցում էր թուրքական կողմի հետ, արգելափակում, մատնում կամ պարզապես ոչնչացնում Արևմտյան Հայաստան անցնող հայդուկային ու զինատար խմբերը: Մեծ Բրիտանիան Թուրքիայից Արևմտյան Հայաստանի հնարավոր անջատումը կամ ինքնավարության հաստատումը համարում էր Մերձավոր Արևելքում ռուսական ազդեցության մեծացման վտանգ, ուստի ջանադիր պաշտպանում էր Օսմանյան պետությանը: Ֆրանսիայի կողմից Թուրքիայի ամբողջականությունը պաշտպանելն, ի թիվս այլ պատճառների, պայմանավորված էր այդ երկրում ներդրած մեծածավալ կապիտալի պահպանման նկատառումով: Իսկ կայզերական Գերմանիան, որ ուշացած, բայց մեծ եռանդով էր մասնակցում աշխարհի գաղութային բաժանմանը, Թուրքիայի դաշնակիցն էր. կայսր Վիլհելմը իր թուրք գործընկերոջը խորհուրդ էր տալիս հայերին ցույց տալ, որ սուլթանի կամքը նրանց համար համագոր պետք է լինի Աստծո կամքին:

Օսմանյան ծանր լծից ազատագրվելուն խոչընդոտում էին նաև այլ իրողություններ: Արևմտյան Հայաստանում հայությունը թուրքերի, քրդերի ու մահմեդական այլ ժողովուրդների հետ շերտընդմեջ էր ապրում: Վերջիններս մեծամասամբ թշնամաբար էին տրամադրված հայերի հանդեպ, իսկ իշխանությունների և մահմեդական մոլեռանդ հոգևորականության հակահայ քարոզները բորբոքում էին այդ թշնամանքը: Գրեթե անհնարին էր Արևելյան Հայաստանից և այլ երկրներից կամավորական խմբեր ու զենք մտցնելն Արևմտյան Հայաստան: Սակայն ամենացավալին այն էր, որ Երկրի ազատագրման հարցում պատասխանատվություն ստանձնած քաղաքական ուժերի, ռազմական անհատ գործիչների և նույնիսկ զինակիցների միջև գործողությունների միասնականություն չկար, ինչը պայմանավորված էր կա՛մ սեփական տեսակետն աներկբա ճշմարտություն համարելու գործելաոճով, կա՛մ խմբապաշտական ու

անձապաշտական նկատառումներով: Այս ամենը հայությանը գրկում էր ոչ միայն պետականություն կամ ինքնավարություն ստեղծելու, այլ նաև բնաջնջման ահագնացող սպառնալիքի առաջն առնելու հեռանկարից:

Եվ այսպես, սուլթան Աբդուլ Համիդի 1894-1896 թթ. կազմակերպած արևմտահայերի ցեղասպանության ժամանակ գոհ գնացին 300000-ը, բռնությամբ մահմեդականացվեցին շուրջ 100000-ը, 300000 արևմտահայեր էլ արտագաղթեցին Ռուսաստան, Պարսկաստան, Ֆրանսիա, Բալկանյան երկրներ և Ամերիկա: 1908 թ. Օսմանյան կայսրությունում ռազմական հեղաշրջման միջոցով իշխանության եկած «Իթթիհատ վե Թերաքքի» («Միություն և Առաջադիմություն») կուսակցությունը, տապալելով համիդյան բռնատիրական իշխանությունը, հռչակեց, որ այսուհետ Թուրքիայում ապրող ազգությունների միջև կլինի իրավահավասարություն: Սա մեծ ոգևորություն էր Թուրքիայում ապրող ոչ թուրք ազգությունների՝ այդ թվում արևմտահայերի համար: Սակայն ընդամենը մեկ տարի անց՝ 1909 թ., երիտթուրքերը ցույց տվեցին իրենց իրական դեմքը՝ Կիլիկիայում կազմակերպելով ջարդեր, որոնց գոհ գնաց ավելի քան 30000 հայ:

Պաշտոնապես ընդունելով պանթուրքիզմը՝ երիտթուրքերը նպաստավոր պահի էին սպասում դրա իրականացման համար, որն էլ դարձավ առաջին համաշխարհային պատերազմը: Երիտթուրքական արկածախնդիրների ճանապարհին, որպես մեծ խոչընդոտ, ընկած էր հայ ժողովուրդը, որի հայրենիքը սեպի նման խրված էր մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Ռուսաստանի և Իրանի թուրքախոս երկրամասերի միջև: Հարկավոր էր վերացնել հայկական սեպը՝ հայ ժողովրդին գլխովին բնաջնջելու, Հայաստանն իսպառ հայաթափ անելու միջոցով: Երիտթուրքական իշխանությունները մանրակրկիտ ձևով ծրագրեցին այս հրեշավոր մտահաղացումը: Էնվերի հրահանգով ստեղծվեց «Թեշքիլաթ մահուսան» («Հատուկ կազմակերպություն»): Այս կառույցն էլ, որի շուրջ համախմբվել էին երիտթուրքական կուսակցության շատ անդամներ, թուրք սպաներ, բանտերից ազատված քրեական հանցագործներ, դարձավ Հայոց Մեծ Եղեռնը գործողության մեջ դրած հիմնական շարժիչ ուժը: Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրագործման մեջ իրենց դերակատարումն ունեցան երիտթուրքական իշխանության այնպիսի

բարձրաստիճան դեմքեր, ինչպիսիք էին զինված ուժերի հրամանատար Էնվերը, ներքին գործերի նախարար Թալեաթը, դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, լուսավորության նախարար Միդհատ Շուքրին և այլք: Երիտթուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանությունն իրագործվեց փուլերով: Նախ՝ ոչնչացվեցին բանակ գորակոչված տղամարդիկ, ինչով թուրքերն ազատվում էին հնարավոր դիմադրություն ցույց տվող հայկական ուժերից: Արևմտահայ մտավորականության դաժան ոչնչացմամբ էլ լուծվում էր հայության գլխատման խնդիրը: Ձեռնաստելով և գլխատելով բովանդակ արևմտահայությանը, նրան մեկուսացնելով արտաքին աշխարհից՝ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ երրորդ քայլին՝ անպաշտպան և անօգնական կանանց, ծերունիների, երեխաների զանգվածային ջարդերին և բռնագաղթին: Սա իր դաժանությամբ մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող ցեղասպանություն էր, որին զոհ գնաց 1,5 մլն մարդ. Ցեղասպանություն, որը նպատակ ուներ իրագործելու հայ ժողովրդի ամբողջական ոչնչացումն ու հայրենագրվումը:

Հայասպան գործողությունները 1915-16 թվականներից հետո ևս շարունակվեցին: Օգտվելով Ռուսաստանում իշխանության եկած բոլշևիկների պարտվողական քաղաքականությունից և ռուսական զորքերի՝ կովկասյան ճակատային գծի զանգվածաբար լքումից՝ 1918 թվականի հունվար-մարտ ամիսներին երիտթուրքերը կոտորեցին նախորդ մեկ-երկու տարիներին հայրենի եզերք դարձած արևմտահայերի մի մասին, իսկ ապրիլից մինչև նոյեմբեր ժամանակահատվածում՝ հայ ժողովուրդը կոտորածների, խոշտանգումների ու թալանի ենթարկվեց նաև Արևելյան Հայաստանում ու Այսրկովկասի այլ վայրերում: Երիտթուրքական նախագծով ստեղծված Ադրբեջան պետությունը «մեծ եղբոր» օգնությամբ շարունակեց հայաջինջ քաղաքականությունը 1918-20 թվականներին: Արևելյան ու Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում հայասպանությունը նոր թափ ստացավ 1920-1923 թվականներին՝ Թուրքիայի նոր՝ քեմալական իշխանությունների գործողությունների շնորհիվ:

Թուրքերի համար ի՞նչ խնդիրներ էր լուծում հայերի ցեղասպանությունը: Այս հարցում միայն Աբդուլ Համիդին, երիտթուրքերին կամ քեմալական վերնախավի՞ն

պետք է պատասխանատու համարել: Պատմությունը ցույց տվեց, որ քաղաքական պլատֆորմների ու գաղափարախոսությունների, կառավարչաձևերի նախընտրությունների տեսանկյունից բավականին իրարամերժ, հակադրվող այս երեք սուբյեկտները հայասպանության հարցում միակարծիք էին ու միասնական: Պատասխանատվության խնդիրն իրականում խորքային է: Թուրքերն ու քրդերը ազգովի են կրում 20-րդ դարի առաջին ցեղասպանության մեղքը: Այս համոզմունքի հիմքում բազմաթիվ պատճառներ կան: **Առաջին**, նախկին շատ սուլթանականներ հաջողությամբ գործում էին երիտթուրքական շրջանակներում, իսկ շատ երիտթուրքեր էլ բարձր պաշտոններ զբաղեցրեցին քեմալական, հանրապետական Թուրքիայում: Սուլթանը կամ երիտթուրքերը ծրագրեցին ու հրահանգեցին հայասպանությունը, սակայն այն կազմակերպեցին հազարավոր պաշտոնյաներ, որոնք գործում էին ոչ թե ղեկավարության հրամանի սպառնալիքի ներքո, այլ, ինչպես ցույց են տալիս պատմական փաստաթղթերն ու ականատեսների վկայությունները, հայատյացության անգուսպ մոլուցքով: Ջարդերն ու տեղահանություններն իրականացվեցին թուրք և քուրդ հասարակության մի սովոր հատվածի կողմից՝ զինվորական պաշտոնյաներ, ասկյարներ, մուլեոանդ հոգևորականներ, քրդական աշիրեթներ, հասարակ գյուղացիներ, որոնց առաջ էր մղում հայերի բնակավայրերին, տներին, ունեցվածքին տիրանալու մղումն ու պարզապես սպանելու և հոշոտելու անմարդկային բնագործ: **Երկրորդ**, երկրորդ աշխարհամարտի տարիներին հանրապետական Թուրքիան, նացիստական Գերմանիայի հաջողության պարագայում, պատրաստ էր ներխուժել Խորհրդային Հայաստան և մահ ու ավեր սփռել այստեղ, իսկ արցախյան հակամարտության տարիներին ռազմական, նյութական ու գաղափարական մեծ աջակցություն էր ցույց տալիս իր ջարդարար փոքր եղբորն՝ Ադրբեջանին և նույնպես նախապատրաստություններ էր տեսել պատերազմելու Հայաստանի երրորդ Հանրապետության դեմ: **Երրորդ**, թուրքական հասարակության շրջանում խոր արմատներ են գցել ոչ միայն ժխտողականությունը, այլև կեղծված պատմության ու Թուրքիայի փառապանծ ու քաղաքակիրթ անցյալի շինծու գաղափարներով սնուցված ազգայնամոլությունը: Պատմության թուրք և ադրբեջանական զեղծարարներն այսօր եռանդով վերանայում են դասական

արևելագիտության մեջ վաղուց արմատացած դրույթները՝ փորձելով ներկայիս Թուրքիայի տարածքում տեսնել սեփական «նախահայրենիքը» ու որպես «եկվորների» ներկայացնել Հայկական լեռնաշխարհում հազարամյակներ շարունակ ուրույն մշակույթ կերտած հայ ժողովրդին, մինչդեռ դասագրքային ու հանրագիտարանային ճշմարտություն է այն, որ թյուրքական ցեղերի կողմից Հայկական լեռնաշխարհի և Անատոլիայի նվաճումն ու զանգվածային հաստատումը այս տարածաշրջանում սկսվել է միայն 11-րդ դարում, իսկ թյուրքերի թվաքանակը Անատոլիայում այդ ժամանակ ըստ ճանաչված թուրք հետազոտող Մ. Յընանչի չէր անցնում 1 միլիոնը, իսկ ըստ Ի. Քաֆեսուղլուի՝ մոտ 550-600 հազար էր: Իրականում միայն 12-13-րդ դարերում թյուրքալեզու բնակչության թիվը տարածաշրջանում հասավ 1 միլիոնի՝ երեք անգամ զիջելով հայ բնակչությանը և անհամեմատ ավելի՝ հույն բնակչությանը: Նման հակագիտական մոտեցումներով ու դրանց վրա հիմնված կրթությամբ դաստիարակելով տասնյակ միլիոնավոր երիտասարդների՝ թուրք ազգային ինքնագիտակցությունը կառուցվում է հակահայկական սկզբունքների վրա: Պատահական չէ, որ «բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք ենք» համերաշխություն քարոզող այս կարգախոսը Թուրքիայի բազմաթիվ բնակավայրերում վերածվեց «բոլորս թուրք ենք, բոլորս Օզյուն Սամաստ ենք» կարգախոսի:

Ցեղասպանության հետևանքներն ահռելի են: Հայությունը, ի դեմս զոհ գնացած երկու միլիոն մարդկանց, կորցրեց վերարտադրման մի պատկառելի ներուժ: Նյութական ու հոգևոր մշակույթի մի հսկայական շերտ վերացավ աշխարհի երեսից: Հայ ժողովուրդը բաժանվեց հատվածների, որոնց սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման ընթացքն ու ուղին հաճախ հակասական էին: Հայության ազգային գիտակցության վրա անջնջելիորեն դաջվեց ցեղասպանության ողբերգությունը: Հայությունն առ այսօր սպասում է արդարադատության:

Պատմության դասեր

Մեծ Եղեռնի հարյուրերորդ տարելիցը ոչ միայն նշանավորվում է մեր պատմության մեծագույն ողբերգությունը վերապրելու, միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակը խնկարկելու առումով, այլև կարևոր հանգրվան է՝ հետադարձ հայացքով

գնահատելու նույն այդ պատմությունը, վերհանելու մեր իսկ մեղքի բաժինը ցեղասպանության ենթարկվելու հարցում:

Որո՞նք էին հայ ազգային բնավորության թույլ ու խոտոր գծերը: Որո՞նք էին հայ ժողովրդի կենսունակության պատասխանատվությունն ստանձնած մարմինների ու գործիչների սխալները: Ի՞նչ պետք է անել մեր ինքնության վնասակար հատկանիշները շտկելու և մեր հետագա զարգացման ընթացքում կոպիտ սխալներ չգործելու համար: Այս ամենի մասին պետք է ազգովի մտածել, և Երևանի պետական համալսարանը պետք է լուրջ հանձնառություն ստանձնի ազգային ու ազգովի մտածողություն ձևավորելու գործում: Ու որքան մենք այսօր թուրքերից համարձակություն ենք ակնկալում՝ առերեսվելու սեփական պատմության հետ և իրերն իրենց անունով կոչելու, նույնքան և ավելի համարձակություն պետք է ունենանք մեզ իսկ վերլուծելու, մեր արատները քննադատելու համար: Սերբերին ու բուլղարներին հաջողվեց պայքարել ու ազատագրվել օսմանյան բռնատիրությունից, իհարկե, առաջին հերթին այն պատճառով, որ մոտ էին քրիստոնյա Եվրոպային, որ ապրում էին նույնադավան ու ազգակից միջավայրում, որ կրում էին համասլավոնականության քաղաքական ուղեգիծ բռնած Ռուսաստանի աջակցությունը: Հայերս կրեցինք Առաջին Աշխարհամարտի ամենածանր կորուստը՝ բնաջնջումն ու հայրենագրկումը, քանի որ ցեղասպանությունը պետական մակարդակով հմտորեն նախապատրաստված էր ու իրագործվեց արագորեն, քանի որ մեծ տերությունների համար հայկական հարցը քաղաքական շահարկման առարկա էր... այս ամենը լավ գիտենք բոլորս, այս ամենը ծավալուն ու մանրակրկիտ ակադեմիական քննության է առնված: Սակայն հազվադեպ ենք հիշատակում այն, որ մեր գործելակերպին բնորոշ է եղել անհեռատեսությունը, ազգակցի հանդեպ անտարբերությունը, շատ անգամ նյութապաշտությունը, և, որ ամենաաններելին է, եսապաշտությունը, սեփական ճշմարտացիությունից վեր այլ ճշմարտություն չճանաչելը, նույնիսկ հայրենանվեր գործեր կատարելիս սեփական փառքը հետապնդելու կործանարար մոլուցքը: Վիրավորվել հայրենիքից և բախտորոշ պահին լքել այն՝ չգնահատված կամ անտեսված լինելու էպիզոդների պատճառով, գնալ ինքնագոհության ոչ այնքան ազգասիրական նկատառումով, որքան ուշադրության

արժանանալու և փառքի դափնի կրելու մտքով, չարախնդալ ձախողված ճակատամարտի համար, քանի որ քեզ չեն վստահել հրամանատարի պաշտոնը. ահա սրանք են եղել հայ ազգային շատ գործիչների բնութագրիչները: Այլապես ինչպե՞ս բացատրել այն, որ 1920 թվականի օգոստոսին հոգևարքի մեջ գտնվող Հաճընին օգնության հասնելու համար ձևավորվող կամավորական խումբն այդպես էլ չստեղծվեց, չկատարեց իր առաքելությունը, քանի որ ընդամենը ութսունինը հոգանոց այդ խմբի հրամանատարի պաշտոնի հարցը սկզբունքային էր երեք-չորս քաղաքական ուժերի միջև:

Սեփական անձը չափից շատ սիրելու և հանրային գործին այդ սիրո մղումով մոտենալու երևույթը, ցավոք, այսօր էլ տիրապետող է մեզանում: Իր համոզմամբ ըստ արժանվույն չգնահատվելու հետևանքով դիտումնավոր ավելի վատ աշխատող, մատաղ սերնդին ավելի անտարբեր կերպով կրթող մտավորականից ի՞նչ կարելի է ակնկալել, եթե նրան վիճակվի ճակատագրական նշանակություն ունեցող հարց լուծելու առաքելություն: Ահա ա՛յս դասը պետք է քաղել կորուստների ու արհավիրքների մեր պատմությունից: Եղե՞նի ցավը վերապրելու կսկիծն ու դառնությունը դեղահաբի՛ դեր պետք է կատարի մեզ համար, և ոչ թե մեծ քաղաքականությանը զոհ գնացած ազգի հանդեպ խղճմտանք առաջացնելու առարկա լինի:

Շայտությունը ցեղասպանությունից վերածնունդ է մուտք գործել շնորհիվ հայի բնատուր տաղանդի, աշխատասիրության ու անջնջելի հայրենասիրության, շնորհիվ պետական, քաղաքական, ռազմական, կրթական ու մշակութային անձնագոհ գործիչների, շնորհիվ նրանց, ում անունները ոսկե տառերով են գրված հայոց պատմության էջերում, նրանց, ում պատմությունը մոռացության է մատնել և նրանց, ովքեր այսօր կան, նվիրվել են ծանր աշխատանքի և սեփական գոյությունն իմաստավորում են ազգին ու մարդկությանը բարիք բերող այդ աշխատանքով: Մենք ստիպված ենք լինելու այդպիսին: Համալսարանականը պետք է իր կյանքով ու գործով լինի այդպիսին ու այդպես պայքարի ցեղասպանության հետևանքների դեմ:

Երևանի պետական համալսարանը հիշում է, դատապարտում, պահանջում, տեր է կանգնում իր հայրենիքին, ծառայում է իր ժողովրդին: